

այն քարանձաններուն, անդունդներուն, օձի պէս սողացող առուակներուն մէջ է որոնց վրայ կանգ առած է իր բանաստեղծի մանկութիւնը, որոնց սարսափովը կամ գեղեցկութիւնովը տոգորուած է իր հոգին, որոնցմէ բարձրացող ձայներովն է որ եղանակաւորուած իր հզօր, իր ոգեւորեղ կշռոյթը, թէ արձակին եւ թէ ոտանաւորին մէջ եւ որ երբեմն տարերային եւ անմեկնելի զօրութեան մը թափը ունի եւ երբեմն ալ քաղցր է ու ամոքիչ հեռաւոր աղբերակի մը մրմունջին կամ սրբազան անտառի մը սօսաւինին նման: Երկար եւ աւելորդ պիտի ըլլար հոս թունել իր հէքեաթներուն անունները. ամենքն ալ հաւասարապէս գեղեցիկ են: Միայն անոնց ստեղծագործութիւնը կրնար արդէն նուիրագործել հեղինակին անունը:

*Ցայգալոյս* ինչպէս գիտէք կը խորհրդանշէ այն խուսափուկ եւ տժգոյն լոյսի պահերը, որոնք ցոլակներու պէս բացուեցան մթին, ամպամած եւ երկարատեւ խաւարին մէջ ու անհետացան իսկոյն: Բայց այն այգը որուն կ'սպասեինք ծագա՞ծ է իրաւամբ: Այն այգը զոր կարծեցինք ողջունել, կրկներեւոյթ մըն էր պարզապէս, հանգրուան մը միայն, մեր ցաւագին անհամբերութեանց համար որ կազդուրելէ աւելի զարմացուց մեզ, որովհետեւ գիտէինք որ մեր Արեւելքը ուրիշ կողմ էր: Ու թեւակոխելէ առաջ ճշմարիտ եւ առաւօտին մէջ, իրաւունք չունի՞նք յուսալու որ ցայգալուսային պահերու քաղցր եւ տրտում երգիչը իր մեծագոյն երգը վերապահված ըլլայ մեծ առաւօտին համար: Ռուբէն Զարդարեան իր գեղեցիկ տաղանդը յայտնաբերելով համեմատաբար ցանցառ կերպով մը, մեծ եւ նուիրական խոստում մը կ'ընէ մեզի եւ մեր բոլոր ցանկութիւնն է անշուշտ որ այդ խոստումը իրականանայ, որքան կարելի է մօտիկ եւ լուսաւոր ապագայի մէջ եւ անիկա շարունակէ ընթանալ, իր առջեւ բացուած ընդարձակ ասպարէզին մէջէն, հետեւելով իր սրբազան, իր փառաւոր ճակատագրին: